ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ա. — ՆՈՐԱՎԱՆՔ

•

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — *Նորավանքը կը գտնուի Վայոց Ձոր գաւառին մէջ, Ամաղու գիւղին հարաւ արեւելեան կողմը, հազիւ երկու քիլոմէթր հեռու, նեղ ձորակի մը ծոցը։ Ունի երեք եկեղեցիներ. Ս. Նախավկայ (Ս. Կարապետ), Ս. Գրիգոր և Ս. Աստուածածին, շրջապատուած հաստ և բարձր պարիսպով. — Ե. Լալայեան, Ազգ. Հանդէս,* 1916, XXVI, *էջ* 26։

ՊԱՏՄԱԿԱՆ. — *Նորավանքը նշանաւոր հանդիսացած է իբրև Աթոռ Սիւնեաց եպիսկոպոսութեան և հանգստարան Օրբէլեան իշխաններու՝ ուշագրաւ տապանագրերով. — Նոյն, էջ* 27։ *Սիսական,* 194։

Առաջնորդական գաւազանը բաւական չափով յայտնի է. այսպէս.

1. — Յովհաննէս Եպս. Կապանեցի, 1105–1154. — *Որդի Հասան իշխանին Բաղաց։ Խումբ մը կրօնաւորներ կը հաւաքէ և կը կազմակերպէ Վանքը. — Օրբէլեան, Մոսկուա, էջ* 251, 254։

2. — Գրիգոր Եպս. Մեղրեցի, 1154–68. — *Օրբէլեան, էջ* 250։ *Սիսական,* 184։ *Լալայեան,* 28։

3. — Ստեփանոս Եպիսկոպոս, 1168–1216. — *Որդի Գրիգոր Եպիսկոպոսի։ Վանքը ազատած է աշխարհական հարկերէ. — Օրբէլեան,* 251, 257, 288։ *Լալայեան,* 29։

4. — Սարգիս Եպիսկոպոս, 1216–44. — *Եղբայրը Ստեփանոս Եպիսկոպոսի։ Իր առաջնորդութեան սկիզբը Լիպարիտ Օրբէլեան կը ձեռնարկէ Ս. Նախավկայի եկեղեցին շինութեան, որ կ'աւարտի* 1221 *թուին։ Սարգիս Եպիսկոպոս առաջ Կոստանդին Կաթողիկոսի* (1221-1267) *մօտ երթալով շրջաբերական թուղթ մը կ'առնէ, Նորավանքի իբր թեմ պահելու Վայոց Ձոր, Ճահուկ և Նախիջևան գաւառները։ Սարգիս Եպիսկոպոս նահատակուած է Երուսաղէմի մէջ, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. — Օրբէլեան,* 251-2, 257, 260։ *Լալայեան,* 29, 46։ *Աղաւնունի, Միաբանք,* 452։

5. — Ստեփանոս Եպիսկոպոս, 1245–60. — *Եղբայրը Սարգիս Եպիսկոպոսի։ Այս ալ Կոստանդին Կաթողիկոսի մօտ երթալով վերստին հաստատել կու տայ Նորավանքի վերոյիշեալ երեք թեմերը. — Օրբէլեան,* 253, 264։ *Լալայեան,* 36, 57։

6. — Գրիգոր Եպիսկոպոս, 1260. — *Օրբէլեան,* 364։

7. — Սարգիս Եպիսկոպոս, 1261–98. — *Որդի Վահրամ ճգնաւորի և եղբօրորդի Տէր Ստեփանոսի։ Իր առաջնորդութեան սկիզբը,* 1261*ին, Լիպարիտ իշխանի որդին Սմբատ կը շինէ հրաշակերտ ժամատուն մը։ Աւելի ետքը,* 1275*ին, Տարսայիճ իշխան քարագործ Սիրանէս վարպետին շինել կու տայ Ս. Գրիգոր եկեղեցին, ուր կը թաղուի իր հանգուցեալ եղբայրը Սմբատ։ Մինչ Սարգիս Եպիսկոպոսի շինարար գործունէութեան յուշարձանը կը հանդիսանայ Արփաջայի վրայ հոյակապ կամուրջ մը. — Օրբէլեան,* 253, 265, 308, 314։ *Լալայեան,* 29, 30, 48, 50, 58։ *Խաղբակեանք, Գ., էջ* 20–21։

8. — Ստեփանոս Եպս. Օրբէլեան, 1298–1304. — *Որդի Տարսայիճի, պատմիչ։ Սա միացուց Տաթևի և Նորավանքի Աթոռները. — Օրբէլեան,* 351։ *Սիսական,* 196։ *Լալայեան,* 30, 54, 59։

9. — Յովհաննէս Արք. Օրբէլ, 1304–1323. — *Որդի Լիպարիտ Օրբէլեանի։ Թաղուած է Նորավանքի ժամատան մէջ. — Լալայեան,* 30, 55, 60։ *Խաչիկեան, Յիշատ. ԺԴ. Դարի, էջ* 42, 183։

10. — Ստեփանոս Արքեպիսկոպոս, 1323–1340?. — *Որդի Ջալալի։ Աշակերտ Նչեցի Եսայի Վարդապետի. — Յիշատ. ԺԴ. Դարի, էջ* 183, 231։ *Միաբանք,* 452։

Բուրթէլ իշխան 1339*ին շինել կու տայ Ս. Աստուածածնի երկյարկանի հրաշակերտ եկեղեցին, որուն վարի յարկը ծառայած է իբրև դամբարան, իսկ վերինը՝ իբրև աղօթատուն. — Լալայեան,* 30, 39։

11. — Զաքարիա Եպիսկոպոս, 1441*ին մասնակցած է Էջմիածնի ազգային ժողովին. — Թ. Մեծոփեցի, Յիշատակարան, էջ* 52։ *Օրմանեան, Ազգապատում, էջ* 2106։

digitised by A.R.A.R.@

Բ.— ՆՈՐԱՎԱՆՔ ՎԵՐԻՆ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Վերին Նորավանք կոչուած մենաստանը կը գտնուէր Վայոց Ձոր գաւառին մէջ, Եղեգիք աւանին մօտ, Ամաղուի Նորավանքէն ոչ հեռու բաւական։ Ունէր երկու եկեղեցիներ, Ս. Սիոն և Ս. Աստուածածին, որոնցմէ առաջինին անունով Վանքը կոչուած է նաև Ս. Սիոն. — Ալիշան, Սիսական, էջ 203։ Ցիշտ. ԺԴ. Դարի, էջ 8, 90, 257։ Ցիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., էջ 399։ Խաչբակեանք. Դ., էջ 120, 177։ Ջեռ. Ս. Ց. Թ. 2156, էջ 328։

ՊԱՏՄԱԿԱՆ. — Վերին Նորավանքի առաջնորդներէն կամ բարեւնպաստներէն ծանօթ են հետեւեալները.

1.— Դաւիթ Բարեւնպաս, 1302–1328ի. — Իր առաջնորդութեան շրջանին, 1302ին, Սիւնեաց մեծապատիւ Ցովհաննէս Օրբէլեան կու գայ Վերին Նորավանք և Դաւիթ Վարդապետին խնդրանքով սուրբ ուխտին կը յաւելցնէ ի միջի այլոց Եղեգեաց Ձորը։ Դաւիթ Վարդապետի գերեզմանը կը գտնուէր Վերին Նորավանքի մէջ. — Ցիշտ. ԺԴ. Դարի, էջ 8, 90, 150։ Սիսական, 203։

2.— Կիւրիոն Բարեւնպաս, 1329–33. — Սիսական, 203։ Ցիշտ. ԺԴ. Դարի, էջ 257։ Ցուցակ Ջեռ. Երուսաղէմի, Դ. Հատոր, էջ 54։

3.— Մատթէոս Վանտայր, 1333. — Խաչբակեանք, Դ., էջ 177։

4.— Սարգիս Եպիսկոպոս, աշակերտ Կիւրիոն (Կիւրեղ) բարեւնպաստի. 1360ին Կիլիկիա գալով եպիսկոպոս կը ձեռնադրուի Մեսրոպ Կաթողիկոսէն «առանց արծաթոյ»։ Ապա Երուսաղէմ կու գայ ուխտի Ս. Տեղերուն և այդ առթիւ գրել կու տայ Ստեփանոս Դրչին Մաշտոց մը. — Ջեռ. Ս. Ց. Թ. 2156, էջ 329, թկ. ՊԹ = 1360։

5.— Շատիկ միայնակեաց, 1476. — Ցիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., էջ 399։

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ. — Վայոց Ձորի մշակութային կեդրոններէն մին հանդիսացած է Վերի Նորավանքը, տաւելապէս ԺԴ. և ԺԵ. դարերուն։ Մանօթ են հետեւեալները.

Ա.— Բեներ Կրօնաւոր, Դրիչ. 1312ին օրինակած է մէկ Աւետարան. — Ցիշտ. ԺԴ. Դարի, թիւ 121։

Բ.— Մատթէոս Քահանայ, Դրիչ, 1318–21. — Օրինակած է մէկ Գովեստ Ս. Աստուածածնի, 1318ին, Դրիգորիս Քահանայի պատուէրով. — Ցիշտ. ԺԴ. Դարի, թ. 185։

Գ.— Ստեփանոս Դրիչ, 1329ին օրինակած է Ներսէս Լամբրոնացիի Մեկնութիւնները՝ Առակաց, Ժողովողի եւ Իմաստութեան գիրքերուն, Կիւրիոն բարեւնպաստի համար. — Ցուցակ Ջեռ. Երուսաղէմի, Դ. Հատոր, էջ 53։

Դ.— Կիւրիոն Վարդապետ, Դրիչ, 1311–33. — Որդի Վարդան Քահանայի, աշակերտ Ցովհաննէս Բարեւնպաստի և Եսայի Նչեցւոյ։ Օրինակած է մէկ Աւետարան, 1333ին, մրանձնացեալ Գրիգորի խնդրանքով. — Ցիշտ. ԺԴ. Դարի, էջ 82, 257։ Խաչբակեանք, Դ., էջ 177։

Ե.— Մատթէոս Քահանայ, Դրիչ, 1395–1476. — Որդի Սուլդանի։ Օրինակած է.

1.— Ճառընտիր, 1456ին, «Հրաշափառ Տօնական» անուանեալ, զոր նկարագարդած և կազմած է Եսայի. — Կաբինեան, Ցուցակ, 920։ Թղթ. Նախնեաց, էջ 727։ Ցիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., թ. 90։

2.— Մեկնութիւն Մատթէոսի, Գրիգոր Տաթեւացւոյ, 1456ին. — Ցիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., թ. 91։

3.— Մեկնութիւն Ցովհաննու, Գր. Տաթեւացւոյ. — Նոյն, անդ։

4.— Մեկնութիւն Սաղմոսաց, Վարդան Վարդապետի, 1457ին. — Ցիշտ. ԺԵ. Դարի, Մասն Բ., թ. 114։

5.— Մեկնութիւն Պատարագի, 1457ին. — Նոյն, թիւ 116։

6.— Գանձարան, 1473ին. — Նոյն, թ. 440։

7.— Ժողովածու Թղթոց, 1476ին աւարտած է. սկսելէն (ՊՀԵ = 1426) ճիշդ յիսուն տարի ետքը. — Նոյն, թ. 518։

Զ.— Ցովհաննէս Քահանայ, Դրիչ 1470ին օրինակած է մէկ Մաշտոց. — Նոյն, թ. 382։

Է.— Պօղոս Վարդապետ, Դրիչ, որդի Դամուրտաչի, աշակերտ Սարգիս Բարեւնպաստի. 1476ին օրինակած է մէկ Աւետարան. — Նոյն, թ. 500։

digitised by A.R.A.R.@

Ս. ԱԹՈՌՈՅՍ ՆՈՒԻՐԱԿՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ

27 Մայիս, Երկուշաբթի կէսօրէ առաջ ժամը 11ին, Ս. Աթոռոյս Նուիրակները՝ Դիւանապետ Հոգշ. Տ. Շահէ Վրդ. Անէմեանը եւ Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեանը, ժամանեցին Ս. Աթոռ: Վանքի աւագ դռնէն, Հոգեշնորհ Նուիրակները դիմաւորուեցան Միաբան Հայրերու, ժառանգաւորաց եւ Ս. Թարգմանչաց վարժարաններու ուսանողութեան եւ բազմաթիւ ժողովուրդի կողմէ, եւ առաջնորդուեցան Մայր Տաճար, ուր Ս. Յակոբի մատրան մէջ կատարեցին իրենց ուխտը: Ապա շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընդունեց զիրենք եւ ուր եղան բարի գալստեան արտայայտութիւններ: Նուիրակներէն իւրաքանչիւրը հակիրճ կերպով խօսեցաւ իր առաքելութեան մասին եւ հաղորդեց Ամերիկահայութեան ողջոյնները Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. մօտ երկու տարիներ առաջ, Պատ. Տնօրէն Ժողովոյ որոշումով ղրկուած էր Հարաւային Ամերիկա, իբրեւ Նուիրակ Ս. Աթոռոյ: Այդ առաքելութիւնը յաջողութեամբ աւարտելէ ետք, անցած է Միացեալ Նահանգներ, ուր Հոգշ. Տ. Շահէ Վրդ.ի հետ միասին (որ անցեալ Դեկտեմբերէն ի վեր հոն կը գտնուէր) ձեռնարկած են Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան ի նպաստ կազմակերպուած հանգանակութեան:

Նուիրակ Հայր Սուրբերը Ամերիկայի Հայոց բարեջան Առաջնորդ եւ Ս. Աթոռիս Միաբան Գերշ. Տ. Սիոն Արքեպս.ի մօտ գտած են անմիջապէս եղբայրական աջակցութիւն եւ հովանաւորութիւն: Նորին Սրբազնութիւնը կազմած է Ամերիկայի Թեմի Կեդրոնական Յանձնախումբ մը, երեւելի ազգայիններէ, եւ շրջաբերական նամակով մը կոչ ըրած Ամերիկայի հայ ժողովուրդին որ ըստ իր առատաձեռն իշխանական նուէրը եւ իր սրտաբուխ այրիի լուման, որպէսզի վերանորոգուի Տիրոջ Ս. Գերեզմանի աշխարհամատուռ տաճարը:

Նիւ Եորքի Ս. Խաչ, Նուարքի Ս. Աստուածածին, Ուստըրի Ս. Փրկիչ, Հարթֆորտի Ս. Գէորգ, Սիրագիւսի Ս. Պօղոս, Ուիչմընտի Ս. Յակոբ, Փրովիտընսի Ս. Սահակ-Մեսրոպ, Նիւ Պրըքլինի Համբարձման եւ Տիթրոյթի Ս. Յովհաննէս եկեղեցիները, որոնք Ամերիկայի Թեմի եկեղեցիներուն մէկ մասը կը ներկայացնեն միայն, ընդառաջած են արդէն Վեհափառ Կաթողիկոսի ուղղած Կոնդակին եւ Նուիրակ Հայր Սուրբերու ներկայութեան կատարած են հանգանակութեան իրենց բաժինը, մասամբ կամ ամբողջութեամբ: Շնորհիւ յիշեալ եկեղեցիներու հոգեւոր հովիւներու եռանդուն աշխատանքին, արդիւնքը գերազանցած է մեր ակնկալութիւնը:

Մեծանուն ազգայիններէ ոմանց մօտ կատարուած դիմումներն ալ գտած են դրական պատասխաններ եւ կարեւոր գումարներու խոստումներ, որոնք իրենց ատենին պիտի հրատարակուին յատուկ կերպով:

Ուրախ ենք հոս յայտնել կարենալու թէ հանգանակութեան առաջին քայլերը պսակուած են լրիւ յաջողութեամբ, ինչ որ վաւերական ապացոյցն է օտար ու հեռաւոր երկիրներու տակ ապրող մեր համարիւն եղբայրներու եկեղեցասիրութեան, մին՝ մեր ժողովուրդի ամենէն սուրբ առաքինութիւններէն: Հոս անգամ մը եւս կ'ուզենք երախտագիտօրէն յիշատակել թէ հանգանակութեան ձեռնարկի այս արդիւնաւորութիւնը ամբողջապէս կը պարտինք Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Կաթողիկոսին, որ նախ յանձն առաւ նախագահութիւնը այս հանգանակութեան

Ը. — Գրիգոր Աբեղայ, Գրիչ, 1495*ին օրինակած է մէկ* Աւետարան, *Աբրահամ Բարոնիկին համար, որ յաջորդ տարին նկարազարդուած է նոյն Տաթեւի Վանքին մէջ. — Ն. Լալայեան, Ցուցակ Ձեռ. Վասպուրականի, էջ* 521 ; *Խաղբակեանք, Դ.,* 119–121.

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@